ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ 1975—1976 ԹԹ. ԴԱՇՏԱՅԻՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ

Վերջին տարիներին Հայաստանում զգալիորեն աճել է հնագիտական հետազոտությունների ծավալը։ Այժմ աշխատում են շուրջ երեք տասնյակ հնագիտական մեծ և փոքր արշավախմբեր ու ջոկատներ, որոնք կազմակերպված են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի կողմից։ Ամեն տարի զգալիորեն աճում է հնագիտական նոր ինֆորմացիայի ծավալը։ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի նախաձեռնությամբ 1977 թ. մայիսի 30-ից հունիսի 1-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ-ում 1975—1976 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներն ամփոփող գիտական նստաշրջանը՝ նվիրված հայագիտության երախտավոր, պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի հիշատակին, որի ծննդյան 70-ամյակը լրանում է 1977 թ.։

Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։ Նա նշեց, որ Կարո Ղաֆադարյանը անջնջելի հետք է թողել հայագիտության մեջ։ Ղաֆադարյանի վաստակը հատկապես մեծ է չորս բնագավառներում՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի ստեղծման և կազմակերպման գործում, պատմական հուշարձանների հաշվառման և պահպանման, միջնադարյան Հայաստանի հնագիտության և, հատկապես, հայկական վիմագրության ասպարեզում։

Կ. Գ. Ղաֆադարյանը շարունակել էր Նիկողայոս Մառի սկսած՝ միջնադարյան Հայաստանի քաղաքների ուսումնասիրությունը։ Նրան բախտ է վիճակվել Ս. Վ. Տեր-Ավետիսյանի հետ միասին սկսելու Դվին մայրաքաղաքի պեղումները։ Հետագայում նրա ղեկավարությամբ կատարված Դվինի երկարամյա պեղումները ի հայտ են բերել բացառիկ նյութեր, որոնք մեծ նշանակություն ունեն Անդրկովկասի և ողջ Մերձավոր Արևելքի քաղաքային կյանքի պատմության ուսումնասիրության համար։ Վիմագրության բնագավառում Կ. Գ. Ղաֆադարյանը ստեղծել է մենագրությունների մի մատենաշար, որը նվիրված է միջնադարյան նշանավոր վանքերին և նրանց բազմաթիվ մեծարժեք արձանագրություններին։ Մեծ է նրա վաստակը նաև հայ վիմագրության «Դիվանի» ստեղծման գործում։ Կարո Ղաֆադարյանը պատրաստել է գիտական կադրեր, որոնք հաջողությամբ շարունակում են իր սկսած աշխատանքները։

Նստաշրջանում զեկուցումները ընթերցվեցին ժամանակագրական հաջորդականությամբ։ Առաջին օրվա նիստերը նվիրված էին քարի դարի, բրոնզի և վաղ երկաթի դարերի հուշարձանների ուսումնասիրությանը, երկրորդ օրվա զեկուցումները՝ ուրարտական և անտիկ դարաշրջանին, իսկ երրորդ օրվանը՝ միջնադարյան հուշարձաններին։ Նստաշրջանին ներկայացվել էր 27 զեկուցում, որոնց թեզիսները նախապես հրատարակված էին։

Բ. Դ. Երիցյանի զեկուցումը՝ «Կացարաններիր շինության հարցը վաղ քարի դարում», նվիրված էր պալեոլիթի ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկին։ Հնագիտության բնագավառում երկար ժամանակ տիրում էր այն կարծիքը, թե մարդու կողմից բնակարանի կառուցումը սկսվել է վերին պալեոլիթից։ Սակայն վերջերս կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ դեռևս հնագույն նախամարդը (հոմո հաբիլիսը) բացօթյա հյուղականման շինություն է կառուցել։ Բնակարանատիպ կառույցներ հայտնի են այժմ աշելյան ժամանակաշրջանից և, ավելի մեծ թվով, միջին պալեոլիթի հուշարձաններից։ Հայաստանում միջին պալեոլիթով թվագրվող այդպիսի բնակարանի հետքեր առաջին անգամ են հայտնաբերվել Երևան—I քարայրի մերձակայքում։ Շինությի մնացորդները մոտ 48 հազար տարեկան են։

«Արարատյան դաշտի և այն եզերող նախալեռնային հուշարձանների խումբը մ. թ. ա. III—I հազարամյակներում» զեկուցումով հանդես եկավ Է. Վ. Խանզադյանը, որն ամփոփեց իր բազմամյա պեղումների արդյունքները Ջրահովտում, Մեծամորում, Արևիկում, Ոսկեբլրում և Լճափի բլրում։ Հնագիտական նյութերը այժմ հավաստում են մշակույթի զարգացումը Արարատյան դաշտում մ. թ. ա. III հազարամյակից մինչև I հազարամյակի սկիզբը և ապա-

ցուցում են Հայկական լեռնաշխարհի՝ մ. թ. ա. XI—IX դդ. հասարակությանը բնորոշ խիստ շերտավորումը։

Երկու զեկուցում նվիրված էր Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթի (մ. թ. ա. III հազարամյակ) ուսումնասիրության առանձին հարցերին։ Ա. Ց. Գևորգյանի զեկուցումը վերաբերում էր Հայկական լեռնաշխարհի մետաղագործության կարևոր հարցերին։ Բազմաթիվ առարկաների սպեկտրալ մետալոգրաֆիական անալիզների վիճակագրական մշակումը ցույց է տալիս մ. թ. ա. III հազարամյակում Հայկական լեռնաշխարհի և կենտրոնական Անատոլիայի մետաղագործության ընդհանրությունը։ Լ. Ա. Պետրոսյանի և Բ. Գ. Երիցյանի զեկուցման մեջ քննարկվում էին Քեթիի (Շիրակ) վաղ բրոնզեդարյան բնակատեղիի քարե գործիքները։

Երեք զեկուցումներ նվիրված էին միջին և ուշ բրոնզեդարյան (մ. թ. ա. II հազարամյակ) նորահայտ դամբարանային նյութերին, որոնք հայտնաբերվել են Արագածոտնում, Սևանի ավազանում և Լոռիում։ Հ. Ե. Սիմոնյանը ներկայացրեց Վերին Նավերի (Աշտարակի շրջան) միջին բրոնզեդարյան դամբարանադաշտի 1976 թվականի պեղումների արդյունքները։ Բացվել են ինչպես ժայռափոր փոսերով հիմնահողային, այնպես էլ քարարկղային դամբարաններ։ Այս կարևոր հուշարձանը աչքի է ընկնում հայտնաբերված մեծաքանակ գունաղարդ խեցեղենով։ Հ. Ռ. Խաչայելյանը պատմեց Զոլաքարում կատարված հետախուզական պեղումների մասին, որտեղ բացված դամբարանները պատկանում են մ. թ. ա. II հազ. առաջին կեսին և I հազ. սկզբներին։ Ս. Հ. Դանիելյանը հրապարակեց Լոռի-բերդի № 15 դամբարանի նյութերը։ Այստեղ կատարված կրկնակի թաղումներից առաջինը թվագրվում է մ. թ. ա. XVII—XIV դդ., իսկ երկրորդը՝ մ. թ. ա. XII—X դդ.։ Հայտնաբերված են ուշ բրոնզի դարի բրոնզե քանդակներ, որոնք իրենց կատարելությամբ գերազանցում են Անդրկովկասում գտնված այդ ժամանակաշրջանի առ այսօր հայտնի բոլոր նմանօրինակները։

Տարբեր տիպերի հուշարձաններ ընդգրկող Շամիրամի հուշարձանախմբի (Աշտարակի շրջան) 1975—1976 թթ. ուսումնասիրության արդյունքներին էր նվիրված Դ. Ե. Առեշյանի զեկուցումը։ Արշավախումբը Արուճ գյուղի մոտակայքում պեղեց մի դամբարանաբլուր, որտեղ հայտնաբերվել են բրոնզե առարկաներ, ոսկե զարդեր, բազմաթիվ կավանոթներ, զոհաբերված կենդանիների ոսկորներ։ Դամբարանաբլուրը թվագրվում է մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսով։ Շամիրամի մ. թ. ա. XI—IX դդ. վաղ երկաթեդարյան հուշարձանների համալիրը բաղկացած է քաղաք-ամրոցից, գլխավոր դամբարանադաշտից, ջրամբարից, գլխավոր դամբարանադաշտից հարավ-արևելք գտնվող պաշտամունքային շինություններից, մեծ կուրգանների խմբից և այլն։ Գլխավոր դամբարանադաշտում պեղվել են տարբեր տիպերի դամբարաններ, որոնք աչքի են ընկնում յուրօրինակ ճարտարապետական ձևերով։ Դամբարանների վրա դրված են եղել մահարձաններ, իսկ գերեզմանը արտաքինից եզերող սալերը զարդարված են եղել բարձրաքանդակներով։

Ուրարտուի ժամանակաշրջանի, ինչպես նաև անմիջապես հետուրարտական հուշարձաններին էին նվիրված չորս զեկուցումներ։ Կ. Կ. Ղաֆադարյանը «Նախնական դիտողություններ Արմավիրի միջնաբերդի կառույցների վերաբերյալ» զեկուցման մեջ կանգ առավ Արգիշտիխինիլիի արևելյան միջնաբերդի ճարտարապետության երեք կարևոր հարցերի վրա։ Միջնաբերդի արևմտյան հատվածի ուրարտական շինությունների հատակագծային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել պարիսպների շինարարության երեք տարբեր ժամանակաշրջաններ։ Ամրոցի նախնական կառույցի մուտքը, որը չի պահպանվել, հավանորեն բացված էր հյուսիսային պարսպի մեջ։ Միջնաբերդի կենտրոնական մասում գտնվում էր հատուկ նշանակություն ունեցող մի շենք, որից պահպանված առանձին քարեր հնարավորություն են տալիս վերականգնելու այդ կարևոր կառույցի հատվածները։

Ս. Ա. Եսայանի զեկուցումը նվիրված էր Օշականի դամբարանադաշտում հայտնաբերված ուրարտական առարկաներին։ Մեծ քանակությամբ իրեր են գտնվել №№ 25 և 59 դամբարաններից։ Երկուսի մեջ էլ բացվել են խմբային թաղումներ, կմախքները կծկված վիճակում։ Գտնվել են բազմաթիվ ուրարտական կավանոթներ, զարդեր, սկյութական բրոնզե նետասլաքներ և մեկ երկաթե նռանիստ սլաք։ Հայտնաբերված առարկաներից առանձնահատուկ ուշադրության են արժանի ուրարտական կավե երկու սալիկներ՝ առյուծների հարթաքանդակ պատկերներով, որոնք երեսապատված են ոսկով։ № 59 դամբարանը թվագրվում է մ. թ. ա. VII դարով։

Օ. Ս. Խնկիկյանը ներկայացրեց Ղափանի շրջանի Շիկահող գյուղի մոտ պեղված № 10 քարարկղային դամբարանի նյութերը, որոնք թվագրվում են մ. թ. ա. VII դարի վերջով և VI դարով։

Գ. Ա. Տիրացյանի «Հին Արմավիրի պեղումները» զեկուցումը ժամանակագրական առումով կապող օղակ հանդիսացավ Ուրարտուի և ան-

տիկ Հայաստանի մշակույթներին նվիրված զեկուցումների միջև։ Մ. թ. ա. VIII—VII դդ. շերտը ամփոփում է ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքի արևելյան միջնաբերդի ավերակները։ Այդ մասում հետագայում կառուցվել է հին հայկական Արմավիրը։ 1975—1976 թթ. բլրի արևմտյան լանջի բարձրադիր մասում բացահայտվել է ուրարտական ժամանակաշրջանի սենյակների մի համալիր, որն իր մեջ պարունակում է անտիկ և միջնադարյան ժամանակաշրջանի շերտեր։ Հելլենիստական շերտը առանձնապես հարուստ է միջնաբերդի արևմտյան հատվածում։ Այստեղ բացվել են բնակարանների բազմաթիվ ավերակներ, որոնց շերտագրական դիրքը ապացուցում է, որ դրանք պատկանում են հելլենիստական դարաշրջանին։ Պեղումներից հայտնաբերվել են հելլենիստական ժամանակաշրջանի բազմաթիվ առարկաներ, որոնց ուսումնասիրությունը ներկայացնում է արտադրության, փոխանակության, կենցաղի և պաշտամունքի պատկերը։

Վերջին տարիների ընթացքում անընդմեջ աճում է հետաքրքրությունը անտիկ Հայաստանի մշակույթի նկատմամբ։ Բ. Ն. Առաքելյանի զեկուցումը նվիրված էր 1975—1976 թթ. կատարված Հին Արտաշատի պեղումներին։ Շարունակվել են VIII և կատարվել են IV բլուրների պեղումները։ IV բլուրը, որ Արտաշատի բլրաշարքի ամենացածր բարձունքն է, իր կենտրոնական դիրքով մեծ դեր է կատարել մայրաքաղաքի պաշտպանական կոմունիկացիաները ապահովելու գործում։ Բլուրը ամրացված էր հզոր պարիսպներով, և այստեղից պարբսպապատ նեղ անցումներ են ձգվել դեպի հարևան բլուրները։ Այս տեղամասի պեղումները պարզել են նաև պարիսպների հիմքերի ամրացման տեխնիկան։ VIII բլրի վրա հայտնաբերված մնացորդները թվագրվում են մ. թ. ա. II դարից մինչև մ. թ. IV դարը։ Այստեղ բացահայտվել են շինարարական չորս շերտեր։ Պեղումների ընթացքում բացվել են կավագործական արհեստանոց՝ թրծելու հնոցով, հասարակական բաղնիք, ավազաններ։ Հայտնաբերվել են մշակույթի զանազան առարկաներ, այդ թվում նաև ներմուծված իրեր։

Ընդամենը մի քանի տարի առաջ անտիկ ժամանակաշրջանի մշակույթը Սովետական Հայաստանի տարածքում հիմնականում հայտնի էր հին Հայաստանի մայրաքաղաքներ Արտաշատի, Արմավիրի, Վաղարշապատի և արքունի ամառանոց Գառնիի պեղումներից։ Այժմ սկսվել է նաև գյուղական միջավայրում գոյություն ունեցած անտիկ բնակավայրերի հնագիտական ուսումնասիրությունը։ Ռ. Ա. Կարապետյանի զեկուցումը նվիրված էր Կարճաղբյուրի պեղումներին։ Սևանա լճի հարավային ափին գտնվող այս պարսպապատ բնակավայրում պեղվել են կանոնավոր հատակագծով մեծ չափսերի սենյակներ։ Հայտնաբերված նյութերը թվագրվում են մ. թ. ա. VI—II դդ.։ Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսովը պատմեց Դիտակում և Տաճարաբակում իր կատարած հետախուզական պեղումների մասին։ Դիտակի հնավայրը, որ ուշ անտիկ ժամանակաշրջանով է թվագրվում, գտնվում է Արտաշատի շրջանի համանուն գյուղի մոտ։ Պեղումների ընթացքում բացահայտվել են կիսակլոր աշտարակներով պարիսպների հիմքեր, բնակելի շինություններ։ Աբովյանի շրջանի Զորաղբյուր գյուղի մոտ գտնվող Տաճարաբակ բնակավայրը բազմաշերտ հուշարձան է, որը ընդգրկում է ամբողջությամբ անտիկ ժամանակաշրջանը, սկսած մ. թ. ա. VI դարից։

Միջնադարյան Հայաստանին նվիրված զեկուցումների շարքը սկսվեց Խ. Ա. Մուշեղյանի «Հայաստանում և Աղվանքում VIII—IX դդ. տարածված դրամների մասին» հաղորդմամբ։ Օմայան հարստության արաբական դրամները տարածվել են Հայաստանում և Աղվանքում VII դարի վերջից և VIII դարի սկզբից։ Այդ դրամները թողարկվել են ինչպես խալիֆայության կենտրոնական նահանգներում, այնպես էլ Հայաստանում (Դվին քաղաքում) և Աղվանքում (Պարտավում)։ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիս-արևելյան երկրամասերի ու Աղվանքի միավորումը վարչական մեկ՝ Արմինիա նահանգում արտացոլված է եղել տեղում կտրված դրամների վրա միևնույն իշխանական անունների հիշատակություններով։ Թողարկվել են պղնձե և արծաթե դրամներ արաբական իշխանությունների կողմից սահմանված միասնական սիստեմով։ Մինչև VIII դարի կեսերը տեղական դրամները սակավաթիվ են, դրանց զանգվածային թողարկումը սկսվում է Աբբասյանների հաստատման ժամանակաշրջանից։ Հայաստանում և Աղվանքում կտրված դրամների հայտնաբերումը Եվրոպայում ապացուցում է նրանց առկայությունը սլավոնական և գերմանական շուկաներում՝ արաբական միջազգային առևտրի ազդեցության հետևանքով։

Միջնադարյան հուշարձաններ ներկայացնող զեկուցումների մի խումբ նվիրված էր Հայաստանի մայրաքաղաք Դվինին, մյուսները՝ վանական համալիրներին և մեկ զեկուցում՝ ամրոցներին։ Դվինի 1975—1976 թթ. պեղումների արդյունքները ընդհանրացնող զեկուցումով հանդես եկավ Ա. Ա. Քալանթարյանը։ Դվինի միջնաբերդից արևելք հայտնաբերվել են քարե մարդակերպ երկու արձաններ, որոնցից մեկը հանդերձանքով զինվորի է պատկերում, մյուսը՝

գնոջ։ Նույն վայրից հայտնաբերվել են անտիկ ժամանակաշրջանի ճարտարապետական բեկորներ։ Քաղաքի կենտրոնական թաղում բացվել են հնագույն կաթողիկոսարանի ավերակները։ Նրա միջուկն էր հանդիսանում սյունազարդ մեծ դահլիճը, որտեղ պահպանվել են մոնումենտալ խարիսխներ։ Պալատը, կառուցված լինելով V դարի 70-ական թթ., գոյություն է ունեցել մինչև VI դարի 70-ական թթ.։ VII դարի առաջին տասնամյակներում, Կաթողիկե Եկեղեցու կառուցման ժամանակ, պալատի ավերակների տեղը վեր է ածվել շինարարական հրապարակի, իսկ IX դարում այդ տարածքը ինտենսիվ կերպով կառուցապատվել է։ Միջնաբերդի ստորին մասում պեղվել է ամրոցի մի փոքր հատված, որը երկու կողմից կառուցապատված է եղել XII—XIII դդ. շենքերով։ Այստեղ հայտնաբերվել են բազմաթիվ առարկաներ, դրամներ։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Կ. Ա. Կոսաանյանի և Ա. Ա. Քալանթարյանի «Ապակու արտադրության հետքեր վաղ միջնադարյան Դվինում» զեկուցումը նվիրված էր Հայաստանի այդ ժամանակաշրջանի արհեստի կարևոր ճյուղերից մեկին։ Կենտրոնական թաղամասում V—VI դդ. կաթողիկոսական պալատի տեղում հայտնաբերվել են VII դարի ապակեգործական արհեստանոցի հետքեր։ Այստեղ գտնվել են աղյուսե վառարաններ, ապակե անոթների խոտան, ապակե զանգվածների բեկորներ, լուսամուտի ապակիներ, հալոցներ և այլն։ Հայտնաբերված ապակու քիմիական և սպեկտրալ անալիզները ցույց են տալիս, որ այն արտադրվել է սույն արհեստանոցում, տեղական հումքի օգտագործմամբ։

Երեք զեկուցում նվիրված էր Դվինի առանձին տեղամասերի պեղումներով բացահայտված համալիրներին, առարկաների առանձին խմբերին։ Ա. Ս. Ժամկոչյանի զեկուցումը ներկայացրեց Դվինի ստորին բերդի պեղումները։ Ֆ. Ս. Բարայանը պատմեց ստորին բերդում բացված արտադրական համալիրի մասին։ Ն. Գ. Հակոբյանը հրապարակեց Դվինում վերջին տարիների պեղումներից հայտնաբերված մետաղե առարկաների հարուստ ժողովածուն։

Ս. Վ. Հարությունյանի զեկուցումը նվիրված էր Մարմաշենի պեղումներին և, հատկապես, այստեղ գտնված միջնադարյան երկու ամրոցների ուսումնասիրությանը։ Մարմաշենի ձորում մշակույթի վաղագույն հուշարձանները թվագրվում են մ. թ. ա. III հազարամյակով, սակայն այդ շրջանի բնակավայրերի ծաղկման ժամանակաշրջանը միջնադարն է։ Հայտնաբերվել են վաղ միջնադարյան երկու փոքր եկեղեցիներ և մի քանի ուրիշ եկեղեցիներ, որոնք թվագրվում են X—XII դդ.։ Առավել ուշագրավ են X դարում կառուցված Վահրամաբերդ և Տիրաշեն ամրոցները, որոնք հյուսիսից պաշտպանում էին Անի մայրաքաղաքը։ Դրանք սկզբունքորեն միատիպ կառույցներ են, որոնց հատակագծային լուծումը նորություն է միջնադարյան ամրոցաշինության պատմության մեջ։

Միջնադարյան Հայաստանի վանական համալիրների ուսումնասիրությունը սերտորեն կապված է վիմագրական հետազոտությունների հետ։ Դ. Մ. Գրիգորյանը, հանդես գալով «Վահանավանքի դամբարանատան նորահայտ արձանագրությունները» զեկուցումով, վիմագիր նյութեր հրապարակեց Սյունիքի XI դարի հոգևոր մշակույթի այս կարևոր օջախի պեղումներից։ Հայտնաբերված արձանագրություններում հիշատակված են Սյունիքի և Աղվանքի նշանավոր գործիչների անուններ, նրանց կյանքին ու գործունեությանը վերաբերող տարեթվեր։ Դ. Դ. Սարգսյանի զեկուցումը նվիրված էր մինչ այժմ մասնագետների կողմից չուսումնասիրված Գհուկի վանքի արձանագրություններին (վանքը գտնվում է Հրազդանի շրջանի Արղական գյուղից 3—4 կմ հյուսիս)։ Վանքի գործունեության շրջանը, ըստ զեկուցողի, տևել է XIII դարի սկզբից մինչև XIV դարի կեսերը։ Բազմազան և հետաքրքիր բովանդակությամբ արձանագրությունները պահպանել են նաև վանքի իսկական անունը՝ Բոլորահար։

Գ. ԱՐԵՇՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ ԵՐԿՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԵԿՈՐ

Հայ միջնադարյան երաժշտական մշակույթի զգալի մասը հասել է մեզ բանավոր և գրավոր ավանդույթի շնորհիվ, պահպանվել հայ արվեստի և գիտության երախտավորների ջանքերով։ Միջնադարյան երգարվեստի բազում նմուշներ այսօր էլ գեղագիտական հաճույք են պատճառում, գրավում են հայ կոմպոզիտորների շատերի ուշադրությունը, յուրատեսակ արտահայտություն գտնելով նրանց ստեղծագործության մեջ։

Սակայն այդ նմուշների առավել զգալի մասը ցրված է աշխարհով մեկ կամ կորսված է ու մոռացված։ Երբեմն միայն, դեպքից դեպք, մեզ են հասնում այդ մշակույթի առանձին պատա-